

ԾՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ  
ՄՈՎՍԻՍՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ,  
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժամանակավոր  
պաշտոնակատար, պրոֆեսոր  
E-mail: tsmovsisyan@yahoo.com  
Doi:10.58580/18290019-2023.2.65-52

ԷՂՈՒԱՐԴ ՓԱՇԻՆՅԱՆ - 100\*

Տարին հագեցած էր հոբելյանական իրադարձություններով, մեկը մյուսին հաջորդող գիտաժողովներով, փառատոներով ու համերգաշարերով: Արվեստի, մշակույթի մեր երախտավորներին նվիրված այդ հանդիսությունները ոչ միայն ծառայում են այդ անհատներին մեծարելու, նրանց կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու, հանրությանը ներկայացնելու շնորհակալ գործին: Դրանք ստեղծում են այն ամուր կամուրջները, որոնցով հաղորդակցվում են տարբեր սերունդներն ու ժամանակները, միախառնվում են ավանդույթներն ու նոր մտեղումները, գեղարվեստական փորձն ու տեսական մտահանգումները: Մակայն ամենից կարևորը կենդանի հիշողությունն է, մարդկային ջերմ ու անկեղծ նվիրումի արտահայտությունն այն ամենի նկատմամբ, ինչն անսահման թանկ է, արժեքավոր է ու հարատև:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Հայաստանի կոմպոզիտորների միության, Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի հետ համատեղ կազմակերպվեցին գիտաժողովներ նվիրված անվանի երաժշտագետ-տեսաբաններ, բազմալստակ պրոֆեսորներ Էդուարդ Փաշինյանի 100-ամյա, Գևորգ Գյոդակյանի 90-ամյա հոբելյաններին, կոմպոզիտոր, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի հիմնադիր Ռոմանոս Մելիքյանի ծննդյան 140-ամյակին և Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի հիմնադրման 100-ամյակին և, իհարկե, տարվա ամենահիշարժան իրադարձությանը՝ XX դարի հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյա հոբելյանին:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի ներկա համարում զետեղվել են նշված գիտաժողովներին ընթերցված զեկուցումներ: Ամսագրի ավանդական դարձած «Ուսանողի ամբիոն» խորագրով ներկայացված են ԵՊԿ Ուսանողական-գիտաստեղծագործական ընկերության գիտաժողովին ընթերցված առավել հաջողված զեկուցումները:

Անհավատալի է պատկերացնել, որ մեր ուսուցիչը, պրոֆեսորը 100 տարեկան է: Կարծես երեկ լիներ, որ մեզ առաջին կուրսեցիներին, ներկայացավ այդ պատկառելի արտաքինով, բարձրահասակ, հաղթանդամ, ահեղաձայն դասախոսը, որի հետ երջանկություն ունեցանք ճանապարհ անցնելու ոչ միայն կոնսերվատորիայում ուսանելու

տարիներին, այլև տասնամյակներ անց, արդեն որպես ավագ ու կրտսեր գործընկերներ:

Առաջին իսկ ընթացքից իր գրավիչ անհատականության անբացատրելի հզոր ներգործությամբ նա մեզ փոխանցեց Հարմոնիայի դասընթացի հանդեպ հետաքրքրությունն ու վարակիչ ոգևորությունը: Յուրաքանչյուր դասն Էդուարդ Ռուբենի Փաշինյանի հետ նոր բացահայտումների, հիրավի հայտնագործումների աշխարհ էր, որի ընթացքում Հարմոնիա ուսմունքը մեզ մատուցվում էր ոչ թե դոգմատիկ կարծրատիպերով, այլ իր կողմից խրախուսվող համարձակ փորձարարություններով և ստեղծագործական ազատությամբ: Եվ այստեղ կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ Փաշինյանը, իր գործի գիտակ տեսաբան, հմուտ մանկավարժ լինելուց բացի նաև կոմպոզիտոր էր, որ երաժշտությունն ընկալում ու մեկնաբանում էր ներսից: Եվ այդ ստեղծագործական ազատությունն իր դասերին առանձնակի հետաքրքրություն ու անկաշկանդություն էր հաղորդում: Դասերն անցնում էին ոգևորված երկխոսությունների, վիճահարույց իրավիճակների աշխույժ քննարկումների և պարզապես այդ պահին հնչող երաժշտության մասին մտքերի փոխանակման ձևով: Հենց այս անկեղծության և անմիջականության շնորհիվ երաժշտագետների ու կոմպոզիտորների, գործիքային կատարողների ու դիրիժորների քանի-քանի սերունդ իրենց ուսուցչի հանդեպ նվիրվածությամբ, պատկառանքի ու երախտագիտության անկեղծ զգացումով, անթաքույց հպարտությամբ խոստովանում են, որ եղել են Էդուարդ Ռուբենի Փաշինյանի սաներ:

Հսկայական է Էդուարդ Փաշինյանի ներդրումը հայ երաժշտատեսական մտքի զարգացման գործում: Ռոբերտ Աթայանի, Մարգարիտ Բրուսյանի, Նովալիս Դերյանի և մյուսների հետ միասին նա առաջիններից էր, որ հեղինակեց հարմոնիայի, պոլիֆոնիայի հայալեզու դասագրքերը, որպես խմբագիր մասնակցեց տարրական տեսության, վերլուծության դասագրքերի ստեղծմանը, որոնցում պարզ ու գրագետ հայերենով, մշակված տերմինաբանությամբ շարադրված են երաժշտատեսական կարևորագույն հիմնադրույթները:

Էդուարդ Փաշինյան Տեսաբանի կարևորագույն հայտնագործությունը հայկական հիպերլոգային ձայնակարգերի ուսմունքն էր, որի դրույթները համառորեն, կարելի է

\*ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի համատեղ գիտաժողովի բացման խոսքից:

ասել՝ մոլեռանդորեն, պաշտպանում էր Փաշինյանը՝ հաղթահարելով ավանդական պատկերացումների ինտրոդյուկցիան, կարծրատիպային մտածողության դիմադրությունը: Ինչպիսի սուր ու անզիջում բանավեճերի ակնառես էր եղել... սակայն դրա հետ մեկտեղ, գիտական վիճաբանության բարեկրթության, մտավորականի պահվածքի, գիտնականի արժանապատիվ կեցվածքի և գործընկերային հարաբերությունների ինչպիսի դասեր ենք քաղել...

Այսօր արդեն Փաշինյանի տեսադրությունները հիպերլադային համակարգի, հայ երաժշտության ձայնակարգերից բխող ուրույն հարմոնիկ լեզվամտածողության վերաբերյալ կայացած իրողություն են հայ երաժշտատեսական մտքի տիրույթում, որպես առանձին դասընթացներ իրենց հիմնավոր տեղն են զբաղեցնում կոնսերվատորիայի կրթական ծրագրերում և, որ ամենակարևորն է, այսօր ունենք իրենց ուսուցչին, իրենց դպրապետին նվիրված, նրա գործը շարունակողներ, որոնց շնորհիվ իր կենսունակությունն ու շարունակականությունն է հաստատում «Փաշինյանական դպրոցը»:

## EDUARD PASHINYAN - 100\*

*This year was filled with anniversary celebrations, conferences, festivals and concert series. By commemorating our prominent figures of art and culture, we aren't only fulfilling an honorable duty to pay tribute to these individuals, or to study their lives and achievements and introduce them to a wider audience. Honoring them, we help to form strong ties between different generations and epochs, between tradition and new ideas, and between creative experience and theoretical concepts. What truly matters here is a living memory, an expression of warmth and genuine human affection towards all that is incredibly dear, valued, and long-lasting.*

*In cooperation with the Institute of Arts of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Yerevan Komitas State Conservatory, Romanos Melikyan Music College, and the Union of Composers of Armenia, scientific conferences were organized dedicated to the anniversaries of two outstanding music theorists - the 100th anniversary of Eduard Pashinyan and the 90th anniversary of Gevorg Gyodakyan; as well as commemoration of the 140th anniversary of Romanos Melikyan, composer and the founder of the Yerevan Komitas State Conservatory, and the 100th anniversary of the foundation of the Music College named after him. And of course, the most noteworthy event of the year is the 120th anniversary of Aram Khachaturian, the greatest Armenian composer of the twentieth century.*

*This edition of "Yerazhshtakan Hayastan" features reports presented at the conferences listed above. The "Student Tribune" section of the journal, which has already become traditional, publishes the most noteworthy papers presented at the conference organized by the YSC Student Research and Creative Society.*

It's hard to realize that our professor, Eduard Pashinyan, is 100 years old. It feels like only yesterday that we, first-year students, met a good-looking and handsome professor with a sonorous voice, with whom we had the pleasure of communicating not only during our years of study at the Conservatoire, but also decades later as senior and junior colleagues.

From the very start, he was able to instill in us passion and interest in the harmony classes, thanks to the mysterious influence of his engaging personality. Each lesson with Eduard Pashinyan became a new world of fresh innovations and true discoveries, where the science of harmony was taught not through dogmatic preconceptions, but rather through bold experiments and creative freedom, which he welcomed and encouraged in every way. Pashinyan, a brilliant music theorist, was not only an excellent teacher, but also a composer who comprehended and interpreted music from within. That creative freedom made his lessons particularly interesting and informal. Classes involving active discussions, intense discussion of contentious themes, and an informal exchange of views on the music being played at the moment. Thanks to this frank and straightforward nature, several generations of musicologists and composers, instrumentalists and conductors recall with sincere respect and gratitude, with undisguised pride that they were Eduard Pashinyan's devoted students.

Eduard Pashinyan's contribution to the development of Armenian music studies is enormous. He was one of the first authors in the Armenian language harmony and polyphony textbooks, alongside Robert Atayan, Margarit Brutyan, Novalis Deroyan, and others. As an editor, he participated in the publishing of textbooks on basic music theory and analysis, in which the most important fundamentals of musical science were presented in simple and literate Armenian language, together with the elaboration of Armenian musical terminology.

Pashinyan's most significant discovery as a theorist was the idea of the Armenian hypermodal scales (supermodal system), which he advocated tenaciously, if not fanatically, overcoming the inertia of traditional views and the resistance of a stereotypical mindset. The disputes we witnessed were passionate and uncompromising... But the lessons we learned from these talks about the appropriate tone of scientific debate, the dignity inherent in a true intellectual's connection with colleagues, were essential!

Pashinyan's concept of a supermodal system, a unique harmonic music language based on Armenian scales, is now a well-established reality in Armenian musicology. His theory has earned its proper place as a separate course on the Conservatoire's curriculum. Most significantly, there are still people among us who are dedicated to their mentor and continue his work, and it is because of them that the Pashinyan School has demonstrated its vitality and continuity.

\* From the opening speech at the conference organized by the Institute of Arts of the NAS of the Republic of Armenia, the Composers' Union of Armenia and the Yerevan State Komitas Conservatory.